


Հ Ա Ս Ճ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԵՏՐՈՒՅԷ

ԵՂԵՊՏՈՍ

Տարեկան գր. ուղ 30

ԱՐՏԱՍՆՍԱՆ

Տարեկան գրանգ 10

Բաժանորդի 30 ԵՒԵՆՈՒՄ ԵՆՈՒ ԿՈՒՅՈՒՄԵՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԵՐԾ ԿԻՏԻ ԸՆԿՐՈՒՄ

Ձի հրատարակումս ձեռագիրները եւ չե՛ն տրուիր :

Բաժանորդարութիւնը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր նախաձայնութեամբ :

Թե՛ ԱՐՇԱՆՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքակտե խնդրոց հարկար պիտի չի դիմել ներքազուրբեան հասցեով րեքրիս Մասնատարին, որ է՛

Քարտուղար Եւ Տրագոր թեան ԵՂԵՊՏԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ՊԵՏՐՈՒՅԷ ՊԵՏՐՈՒՅԷ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԻՔԵՍԱՐԹԻ ՕՐԵՐԸ Զօրու ամսագրերը ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն ZUSE 20 ՓԱՒԱ ՈՂՁ

ՓՈՒՐԻՄԷՆ ՄԵԾԻՆ

Պ. Արփիար Արփիարեանի եւ զերական վախճանը սղրագիրն ու կոծեցինք արդէն ամեն անոնց հետ, որոնք այդպիսի ոճը գործական աւարքներու հանդէպ զգուհոք միայն կրնային վերաբերուիլ :

Իսկապէս մը կամ հոգեկոյտի մը առջև ամէն ոքի և ատելութիւն կը դադարի կ'ըսեն, և յարգանքը կ'սկսի. ու պէտք է որ ա՛հն կէնցող պատկեր մարդ այդպէս վարուի՝ եթէ հարկը անհրաժեշտ է, ու եթէ խնդիրը հանրութեան մը ճակատագրին հետ խաղալու կոչուած կամ ինքնեկ մէկու մը շուրջը չի գաւնար :

Պ. Արփիար այս վերջին դատակարարին կը պատկանի, ատենն է որ՝ քիչ մ'ալ խտապահանջ ըլլանք նոյն իսկ՝ մանաւանդ որ տարիներու իր գործունէութեան շրջանակին մէջ մահու և կենաց խնդիրները մեծ դերեր կատարած են. աւելի մահու՝ քան թէ կենաց... որուն արդարացուցիչ բանաձևը եւ չաժ է միշտ (ազգային ազատագրութիւնը) : 2. քնա՛ղ բառ, թանձրամա՛ծ ծածկոյթ... : Այսպիսի իր քաղաքական գործունէութեանը համար : Վերադառնանք գրականին՝ որոյ միջոցաւ և ուժով քողարկել կըցած է քաղաքական գործունէութիւն ըստածին մեծաշունթ և կամաւոր սխալները, ու կ'ունենանք :

Արփիար հայ գրականութեան և հրատարակագրութեան ուսիչըն, շատ մեծ, հոյակապ, բարձրագիւր, մեծակառոյց և ամպածրար գրեակը պիտի ըլլար, եթէ ստել, խարել ու կեղծել չ'գիտնար. կամ ճշգրիտ սրակու՛մ մը ըրած ըլլալու համար, այդ երկու երեք յոռի ունակութիւնները արհեստի կարգը անցած չըլլային իրեն քով՝ կարևորագոյն պարագաներու մէջ... :

Անոր ձեռքը սուր ու գրիչ տըրդւած էր ի վերուստ, հայրենիքին իրական օգուտները ցոյց տալու՝ իր ժամանակին. նա այդ երկու կարևոր ուժերը անխնայ գործածեց երբեմն հայրենիքին դժբախտութիւնս

ները կերտելու, անոր նուիրակները ինքնուրուր սուրի տակ տալու կամ պարզապէս դատարկացնելու համար : Ատենք իր պատասխանատու գործունէութեան շրջանին մէջ կ'իյնան :

Հոյակոյտի մը առջև ամեն ոքի և ատելութիւն կանգ կ'առնեն ըսինք վերը : Եւ թերևս այդպէս աւելի վայելուչ ըլլար, եթէ «Լուսարեւի» 496 թիւոյն մէջ «Մեծ եկեղեցական» մը իր բարեկամներէն մէկուն միջոցաւ քիչ մը տնիրաւ - ուրիշ որակականներ ալ կրնայինք գործածել անխառն բառին տեղ - թեւազրանքներ ներշնչած չըլլար հանդարտ ժողովուրդի մը, ա՛յնչպիսի հանդարտ՝ որ անցելոյն մէջ 1896 ը յիշեցնող կանխապատրաստեալ մահակներով յարձակեցաւ ուրիշ «Մեծ եկեղեցական» մը վրայ, Պէն էլ սուրէնի եկեղեցուցին մէջ : Հարկ չ'կայ անուն և թուական նշանակել այս տեղ : Մեր գիտատրութիւնն է «Մեծ եկեղեցականին» խոնարհարար քանի մը բաներ յիշեցնել և մեր այս քայլին մէջ եթէ ավտար պարագայ մը գոյութիւն ունի, այն ալ Արփիարի՛ առեղծուածային անձնաւորութեան՝ ինչպէս կ'ըսէ Հանդէս Ամսօրեայ, գործունէութեան և եղբրական մահուան հետ կապակցութիւն կ'ունենայ :

Ոճրագործութիւնը պատարակել, նողկալ, գարշի՛ւ անկէ՛ ոճրին երթական արդարացնել չ'նշանակեր, ու մարդ պէտք է որ մահէն առաջ իր կեանքի օրատետրին մէջ բաց երես մը թողու, յետ մահու ուրիշներու ձեռքով այդ բաց էջը արժանապէս փակուելու համար... :

Ողբացեալ Արփիարեանի համար իր պաշտելի թերթին անհատնու՛մ նիւթերը սպառելու վրայ էին, ու ատոնց յետոյնաց ու նուազկոտ ճառագայթները մայրամուտի տըժգունութիւնն հագած երկրի արարածներուն մնաք բարոյի ողջոյնը կը մընջէին, ու ահա «Մեծ եկեղեցականին» հակայ և անհզորտ ձայնը անգամ մ'ալ եկաւ թունդ հանել հանդարտելու վրայ եղող մտքերը, և նոր եռանդ տալու մանաւանդ Արփիարին արեան հոտով թմրած հոգիներուն :

Ահա թէ ի՞նչ կըսէ մեր սիրեցեալ ու պաշտելի «Մեծ եկեղեցականը», որ թէ և հայրենասէր, թէ և հեղինակաւոր՝ որուն առջև ամեն հայ կը խոնարհի, նոյն իսկ Ս. Կարապետի թաղային ընտրողները, վերջապէս ամեն հայ՝ որ մօտէն չէ՛ փորձած, չէ՛ տեսած ու չ'գիտէր թէ մեծ եկեղեցականներ երբեմն ա՛յնպիսի խոշորեկ սխալումներ կը գործեն, որ իրենց անուշով անդարմանելի ոճիրներ ալ կրնան գործուիլ, արդարներ կ'անխառնուին, կ'անպատուութիւն և անարդարութեան սիւնին կը դատապարտուին, և Արփիար մ'ալ այդ կարգի շեղումներու միջիւ ազգակը կրնայ դառնալ... :

«Մեծ եկեղեցականը» իր անհոն գաւը և խորին զայրոյթը յայտնած է անուր արարքին առթիւ և իր անէժքը տեղացած զայն երկնող վատ ու դաւաճան աւազակներու գլխին :

Ոճրագործութեան մասին ըլլալու զայցած զայրոյթին ի սրտէ կը ձայնակցինք իրեն, որովհետեւ ոճրագործութիւնը մեր ազգին ազնիւ նրկարգիւր կը յոռեջլէ ու այսուհետեւ հայ պարկեշտասուն մայրեր ոճրագործներ՝ է որ պիտի ծնանին : Ի՞նչ մեծ նախատինք ազատութեան ցանկացող ազգի մը համար : Այս պարագային կարծէք որ «Մեծ եկեղեցականը» Բրիտանի աշակերտը, ներելու պարտաւոր եկեղեցուց այդ մեծ պաշտօնեան իր զայրոյթը այդչափ շեշտակի չ'թափէր նաև իր մըս սրգիններուն ալ գլխին, որոնք անգիտակցութենէ մոլեալ, Մեծ եկեղեցականներու հոգեպարար և հրահանգիչ խրատէն զուրկ, անոնց գիտակից գործունէութեան անտեղեակ՝ ստէպ կը շեղին ուղիղ ճամբէն, ու ազատագրութեան Ս. ծրագիրը փոխանակ սրբութեան տաճարին բարձրագոյն աստիճաններուն վրայ տանել բազմեցնելու, ցելներուն մէջ կը քաշկռտեն յաճախ, աւազակութիւնն ու անբարոյականութիւնը կ'արդարացնեն ու կը քողածածկեն այդ հրապուրիչ և մաքրիսացնող բառերով : Ոճիրը կը բազմացնեն հայ բարեհամարա տարրին մէջ, ու այդ ոճրագործութիւններէն սարսափահար տկար արարածներու ահաբեկումը կը շահագործեն... և ի՞նչ

գեանաբարչ ու գձու՛մ միջոցներով, որ մարդկային հնարամտութիւնը հազիւ ուրեմն կրնայ երկնել ու ծնանել... :

Ուրեմն՝ օրհնեցէ՛ք և մի՛ անիծանէք :

Ո՛վ Մեծ եկեղեցական. Ձեր անիծածը, ոճիրը երկնող վատ դաւաճան անուանածը Ձեր առողջ դատախարակութեանը կարօտ Ձեր որդիներն են, քաղաքացի ունին իրենց ձեռքին մէջ, ամէն ապօրինութիւն ծածկելու համար, ամէն զեղծու՛մ հակադարձ խոհարար մը կ'արդարանայ անոնց խղճին առջև, որպէսզի օր մը թերևս՝ փառայ դահ մը կանգնի այդ ոճիրներուն և անխառնութիւններուն վրան, որուն Պօրճիաները անգամ պիտի նախանձէին : Եւ ի՞նչ կ'իտնանք թէ՛ «գերմարդկային արդարութիւնը չէր որ մուկ գիշեր մը Գահիրէի փողոցներէն մէկուն մէջ յանրաբի խոշտանգուած ու չարարուած անմեղներու վրիժառու պատուհասը անօրինեց, փոխարինելու համար բարոյական պատժազրութիւն մը, կեանքերու և պատիւներու ոչնչացումով... : Ինչպէս ինքն իսկ ըսած է :

«Ողբացեալ գրագետին Ա. Արփիարեանի՛ ազգային փառաւոր թաղումը բարոյական պատիժ մը չարագործներուն համար : Նոյնպէս խիստ մեծ բարոյական պատիժ մը պիտի ըլլայ նոյն ոճրագործներուն համար ազգային միջոցով, զոր որչափ հնար է փայլուն և ՕՏԱՐԱՑ ՄՍՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԻ պէտք է ընել, որպէսզի գիտնան եւրոպացիք թէ՛ (Մ. Յ. — Եթէ ազեկը չեն գիտեր) Հայոց ժողովուրդը գիտէ իր ծոցէն ելած եղեռնագործներն իսկ իր ունեցած ուժի սահմանին մէջ պատժելու :

Իսկ՝ ո՛վ Մեծ եկեղեցական, եթէ Ձեր այդ բարի արամագրութիւնները և ազգային յարգանքները սարբեր պարագաներու մէջ և չարաչար շահագործուի՛ն, ո՛վ է արդեօք պատասխանատուն... :

Արփիարի մահուան համար պէտք է ցաւել, սակայն նոյն չափ ալ պէտք է ցաւել ուրիշ ունի սխալ թեւադրանքներու համար, որոնք հեղինակաւոր բերաններէ ելած՝ մեծ ու պղտիկ եկեղեցականներէ ըլլած՝

կը շարունակեն անդիտակ մտքերը, ու այս տեղ ծագում կառնէ մեծ հարցը, որուն թերեւս առիթը ներկայանայ լուծում մը տալ փորձելու:

ՊԼՈՒՉ ԱՔԵՂԱՅ

Խնդրագրական զեկոյց. - Պատկերասիրական ժողովոյ ուղղակի համաձայն կազմակերպութեամբ Հնարարական ժողովը՝ որտախ Ենիք որ գործի ձեռնարկած է ընտրութիւններ կատարելու՝ և նոյնչափ որտախ Ենիք որ իր «աշտակալական ձեկոյցէն» օրինակ մ'աչ մեզի դիպած է ի հրատարակութիւն: Մենք՝ անկենսայ սիրով հրատարակելով Հնարարական ժողովոյ յետագայ Յայտարարութիւնը, ընտրութեանց համար ուղղակի պայմանաժամը ինչ կը գտնենք, երեսփոխանի նման անկենսայ սիրով ժողովակալաց անձը դիտելու անկենսայ ու ներկան ուսումնասիրելու և հանրութեան ներկայացնելու ընտրութեան համար, որպէս զի յարգելի ու պարսպանակ տեսփոխաններ ունենանք:

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ Ե ԳԻՊՏՈՍԻ ԹԻՒ 1 Գահիրէ 7) 20 Մարտ 1908 ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Գահիրէի Պատկ. Ընդհանուր Ժողովոյ անդամներէն չորսը՝ Վահմ. Տիգրան փաշա տ'Ապրո, մահաւար և Տիարք Բարթիկ նահապետեան Գէորք Թօփալեան և Կարապետ Մեղքնեան անձնակալ պատճառներով հրաժարած, իսկ Վահմ. Պօղոս փաշա նուպար, Մկրտիչ պէյ Մարկոսօֆ և Տիար Ատոմ Արսլանեան վիճակաւ դադարած ըլլալով, եթէ աշխարհական Երեսփոխաններ պակաս են նոյն ժողովէն:

Ընդհանուր Ժողովն ընդունած է որ իր անգամայ թիւը կեդրոնական Պատկ. Վարչութեան անօրինակութեան համեմատ՝ մէկ աշխարհականի և մէկ եկեղեցականի յաւելումով՝ 16 և 18 ի բարձրանայ, ուրեմն աշխարհական ու թող նոր Երեսփոխանները պիտի ընտրուին դադարեալներէն, որոնք ըստ օրինի վերնարելի են և օրին ազգայիններէ, որոնք ընտրելի ըլլալու վիճակին մէջ կը գտնուին:

Այս ընտրութիւնները կատարել տալու համար Գաւառ. Վարչութեան պատ. Գաղաքական Ժողովը մեր նախագահութեամբ ընտրական ժողով մը կազմած է, որ որդէն գործի ձեռնարկած է, Կեդրոն ունենալով Պէշի Սուրէնի Առաջնորդարանը և իր որոշման համեմատ՝ կը փութանք յայտարարելու թէ վերոյիշեալ ու թ աշխարհական Երեսփոխանաց ընտրութեան

օր որոշուած է տարւոյս, ըստ նոր տոմարի ապրիլ 5 ի կիրակի օրը:

Այս առթիւ Ընտրական Ժողովը կը յիշեցնէ թէ քուէ տալու իրաւունք ունին այն ազգայիններն, որ

1. 25 տարին լրացուցած և Օսմանեան հպատակ են և չեն գրաւուիր սահմանադրութեան 67րդ () Յօդուածի արամադրութեան ներքեւ:
2. Բնիկ կամ ընտանեօք ե. բեք և առանց ընտանիքի հինգ տարին երէ լվեր յ'նգիպտոս () հաստատուած են:
3. Նախընթաց երկու պայմաններն իրենց վրայ միացնելով հանդերձ, 1904 Մայիս 1 և 1907 Ապրիլ 30 եռամեայ շրջանի ազգային տուրքը վճարած են ամբողջովին և կամ Սահմանադրութեան 65րդ յօդուածին նախատեսած վիճակի մէջ կը գտնուին, այսինքն կառավարութեան պաշտօնեաներ, վճարեալ բժիշկներ, օգտակար զբոսայգիներ և ազգային օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք են:

Ընտրական Ժողովը քուէարկելու իրաւունքնին արդէն հաստատուած ազգայիններուն մասնաւոր նամակներ և քուէթուղթ պիտի դրկէ առաջիկայ ընտրութեանց առթիւ և իր ստացած հրահանգին համաձայն՝ մինչև առաջիկայ Ապրիլ 3, Արբաթ, իրելուն ժամը հինգ կերկարածքէ տուրք վճարելու պայմանաժամը, որպէսզի անոնք որ անունին Առաջնորդարանի տուժարաց մէջ արձանագրեալ է և ընտրական իրաւունք կրնան վայելել տուրք վճարելով ու կ'ուզեն մասնակցիլ առաջիկայ ընտրութեանց, գիւրութիւնն ունենան վճարելու զայն և իրենց անուններն արձանագրել տան ընտրողաց ցանկին մէջ:

Տուրքը, տարեկան 25, 50 կամ 75 եպ. սղ զըշ. է ըստ կամս վճարողին, և կարելի է վճարել հաւաքելի Պ. Տիգրան Տէօլլէթեանի և կամ Կիրակի և տոն օրերէն զամեն օր առտուան ժամը 9-12 և իրիկունը 3-5 Առաջնորդարանի Իւլաւանտան, ամէն պարագայի տակ պաշտօնական ընկալաբի փոխարէն:

Իսկ անոնք, որոնց անուններն արձանագրուած չեն Առաջնորդարանի տուժարաց մէջ, սակայն իրենք դիտեն թէ վերոյիշեալ պայմանաց մէջ կը գտնուին և անձնական արժանիքով և կամ տուրք վճարելով իրաւունք կրնան ստանալ առաջիկայ ընտրութեանց ստանքը ուէ տալու, Առաջնորդարան կը դիմեն, անոր տարւոյս Յունուար 14 թուական և 364 համարու պաշտօնական յայտարարութեան տրատուածն են:

Իսկ անոնք, որոնց անուններն արձանագրուած չեն Առաջնորդարանի տուժարաց մէջ, սակայն իրենք դիտեն թէ վերոյիշեալ պայմանաց մէջ կը գտնուին և անձնական արժանիքով և կամ տուրք վճարելով իրաւունք կրնան ստանալ առաջիկայ ընտրութեանց ստանքը ուէ տալու, Առաջնորդարան կը դիմեն, անոր տարւոյս Յունուար 14 թուական և 364 համարու պաշտօնական յայտարարութեան տրատուածն են:

(*) Մասնօթ. խմբ. - Սահմանադրութեան 67րդ յօդուածը յաջորդ թուով պիտի ներկայացնենք ընթերցողներուն: (*) Գահիրէ օր Աղէքսանդրիա իր յատուկ Երեսփոխանութիւնը ունեցաւ, ուրեմն վերեւ նշանակուած եզրկատար Գահիրէ և շրջակայիները պէտք է հասկընալ:

մարտած կերպով և հաստատելով իրենց ինքնութիւնն՝ պէտք եղածն ի գործ կը դնեն և անունին արձանագրել կուտան ընտրողաց ցանկին մէջ, որու մեր ստորագրութեամբ վաւերացեալ մէկ օրինակը կախուած է արդէն Գահիրէի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ բակին մէջ:

Առաջնորդական փոխանորդ և Նախագահ Ընտրական Ժողովոյ Յարութիւն քնն. Յակոբեան

ՈՒՐԱՅՈՒՄՆԵՐԸ ԼԵՒՈՆ ԼԱՐՆԵՐԻՆ Ուր ու հանդիպի այս տղերք կարգաւոր:

«Արշալոյս» ի նմարագրութեան հասցէին ապահովագրեալ 8 Մարտ թուակիր նամակ մը զրկելու անձտեղի յանդիմութիւնը գործած էրք Ծրանայէն, եթէ հոն էք հիմայ:

Առանց նախապէս կարենալ հաստատելու թէ՛ մի ոմն Լեւոն Լարենց է զրոյը, ստացանք զայն, խմբագրական կողմին կեր տալու համար:

Ձեր նամակին մէջ հաւելիլ կը ձեռագրէք «Արշալոյս» ի անկախ և չեզոք ուղղութեանը, և այդ շարժարար բաներուն կրթեալ՝ կը փափոքէք որ լոյս անանէ ներփակեալ նետարի տուժարէն քաղուած ուրացումի կերպարագատու գիրը:

Գծուած չէք հասկնալ Ձեր դիտարութիւնը, որ էր՝ - Ձեզմէ ալ ընդունուած մեր անկախ ուղղութիւնը կը թելադրէ մեր այսպէս ըսելու. - նախ՝ մեր ներքին կազմակերպութեան անձնօթեղողներուն ա'յնպէս մը ցոյց տալ թէ՛ մենք ձեզի հետ ներքին կապեր ունինք. երկրորդ՝ թէ «Արշալոյս» կուտակցական ողորմած հոգի թերթի մը - Ազատ Բեւեռ-չարտակութիւնն է... և են և են, և այսպէսով մեր գործերը դժուարացնել:

Երրորդ՝ մեզի գրելէ յետոյ, Ձեր ձեռքը եղած միջոցներով ստիկանութեան ալ ծանուցանել, մեզ ամբաստանել տալու համար թէ՛ ձեզպէսներու համակիր և մեղատիկց ենք, և ո'վ մեր զգալագրութեանը թղթակցութիւնն ալ ունինք: Մասնաւոր, զրպարտել ու չարախօսելն ալ միջոց մ'է այն ամեն անբարոյականներուն համար, որոնք ազատու համարանքով աւելի ազատ նպատակներու հասնիլ իրենք իրենց կը ներեն և ի գործ կը դնեն... Մեր մէջէն մեծ արեւմտարեւելի հանդիպողներ եղած և անձամբ հաստատած են Ձեզի պէս ամբողջ և անպատիւ յոխորտացողներու այդ անարդ միջոցներէն մէկ քանի տեսակներուն, որոնք վատութիւն միայն բուրած են...:

Մեզի ծանօթ եղողները քաջ գիտեն արդէն թէ՛ Լարենցի մը լարախաղացութիւնները միջոցն մեզի չեն կըրնար հասնիլ, քու մէկ քանի մեղապիցները ալ գիտեն զայդ...: Հիմայ որ արդարութեան ճիշտներէն ազատ, Ձեր ամբողջ օրըն մէջ կը գտնուիք, ուրկէ մեզի ի հրատարակութիւն նամակ մը գրելն ալ մեծ քաջութիւն կը նկատէք անտարակոյս, մեր վերջնական ու անվերապահ պատասխանները լսեցէք, որ հետեւեալներն են:

Ա. Մենք կատարութեան են հանրային բացարձիկ հանդուժման վրէժաւած եղեռնագործներու հետ յարաբերութիւն մշակելու դիտարարութիւն երբեք ունեցած չենք և չենք ալ ուզեր ունենալ: Հետեւաբար ո'չ թղթակցութեան պէտք ունինք և ո'չ ալ «զրոյ» ներու:

Ա. Մենք կատարութեան են հանրային բացարձիկ հանդուժման վրէժաւած եղեռնագործներու հետ յարաբերութիւն մշակելու դիտարարութիւն երբեք ունեցած չենք և չենք ալ ուզեր ունենալ: Հետեւաբար ո'չ թղթակցութեան պէտք ունինք և ո'չ ալ «զրոյ» ներու:

Բ. Ձեր արդարացումները - թոյլ տուէք անուանելու պայմանաւոր ուրացումները - կրնայիք Ձեր Ամերիկայի պաշտօնաթերթին զրկել, ուրկէ անբարոյութիւն թելադրող անհատուած ու չափազանցուած քարոզներ կը տեղան հայ ժողովուրդին միամիտ ու բարեմիտ դատակարարի գլխուն:

Գ. Փոխանակ այդպիսի թագուն և ստորին միջոցներով մեզի եզրկատական կատարութեան մասնացոյց ընել մտածելու, կրնայիք յայտնի համարձակ մտանել զմեզ, եթէ օրինաւոր փաստ մը ունէիք: Բայց սա ալ զիպէք որ եզրկատական ստիկանութիւնը եթէ սխալիլ չուզէ՛ մ'ուզէ թնջանալով կրնայ զարնել, և անոր ազդեալ գոթ և ձեզպէսները մ'ուզէ մը անպարզ քարոզներ, մի՛ պարծենաք...:

Դ. Փոխանակ մեր թերթին միջոցաւ - եթէ այդ միջոցը ազնուարար չը խնայուի Ձեզի և նմաններու - ընթերցող հանրութեան միտքը ճշմարտութիւնէ շեղեցնելով այլուր կեդրոնացնել մտածելու չափ յաւակնուող կը զբնուիք, լուսաբոյն է որ հոս վերադառնաք, և զՁեզ ի բացակայութեան իրաւեւրեանագործ դատապարտող ոճրագատ ատեանին առջև ինքզինքնիդ պաշտպանէք, ու երբ արդարանաք՝ ու մենք՝ ինչպէս նուազ ուրիշներ որոշապէս զիտանալ զայդ, այն ատեն Ձեր արդարացումը ի լուր աշխարհի հուշակեւ միջոցներուն վրայ կը մտածուի, և այս ամէն ազնիւ մարդու բարոյական պարտաւորութիւնը կը գտնուի: Այս է Ձեր փկութեան միակ ճամբան:

Ե. Դուք ինքզինքնիդ ֆալսաբան յանցաւոր ներկայացնել կը փորձէք մեր նամակաւ: Մենք այդ բանին Ձեզի չափ համոզուած չըլլալէ դատ, պէտք չունինք նոր քննութիւններ ընելու հաստատուած համար թէ՛ զուք անտարակոյս քաղաքները և սովորական հասարակներ էք, որ տմեն ազգ ալ իր մէջ կուենանայ քիչ մը ձեզի պէս զարգացած ու շատ մ'ալ տղէտ...:

Այս մեր պատասխանը Ձեր ապահովագրեալ նամակին, որուն՝ հակառակ մեր թուղթ պահելու սովորութեան՝ ա. մենք մեծ կտորը, այս պահուս Ձեր երկար անաչիւն մէկ քառասներորդին մեծութեամբ կոտորակներու կը վերածուի:

Ասկէ անդին՝ եթէ կրնաք Լ. Էոն Լարենց, լարեցէք սակաւին ձեր անարդգութիւնն ու դուադրութիւնները, որոնք մեզի բնու և ո' և է կերպով վախ պատճառելու հանդամանք չունին: Բաւական է որ մենք յարող եղած ենք արիւղ կատարութեան օրէնքներն և այսպէսով՝ զիտենք թէ նա մեզմով ըզբաղելու ալ ևս պատճառ մը չունենար եթէ Ձեզի պէս ստորին խաբարներու անարդ և զոռւ գործիքները իրենց յիմարական քայլերով չ'հայթայթեն զայն, ի վնաս իրենց և ձեր տասնակը կազմող նմանակին ալ միանգամայն:

Գահիրէ 17 Մարտ 1908 ԽՄԲ.

ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ԳԱՏԱՏԱՆԻՆ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

«Արշալոյս» ի նախկին Տնօրէն Տ. Ն. Թորոսեանի 1906 Հոկ. 2 (ն. տ.) թուականի մէկ նամակը թերթին ջրղթութեան մէջ հրատարակուեցաւ արդէն և ներկայ թուով ալ հրատարակութեան կը տրուի անոր փրանսերէն զրած մէկ նամակին թարգմանութիւնը՝ իրիւ նախագահի ազգային

ժողովոց, Գեր. Առաջնորդին զրկու-
ւած, որուն մէկ օրինակը՝ Տ. Թո-
րոսեանի կողմէ հարկ դատուած է
Պատկ. Երեսի. Ժողովոյ Առաջնորդ
Վսեմ. Պօղոս բաշա Նուպարին ալ
զրկել ապահովագրեալ նամակաւ.
Գանդատելով և միևնոյն ատեն հա-
մառօտիւ պարզելով իրեն դէմ ի
դորձ դրուած և նմանը չի տեսնը-
ւած վայրագութիւններուն համար,
որոնց ուժ տուած են նոյն ատեն-
ուան քաղաքական ժողովոյ անդամ-
ներն գիտակցարար կամ անգիտակ-
ցարար, ինչպէս քեզ յետոյ պիտի
տեսնուի:

Հոս փութանք յիշատակել թէ՛
այդ շրջանի քաղաք. ժողովոյ ան-
դամներն էին, Տիարք Մարտիրոս
Արեան, Ատոմ Արսլանեան, Տ. Բէ-
շէճեան և Յարութիւն ձէպէճեան:

Սոյն նամակներու պարունա-
կութիւնները, որոնք ի հարկէ ըս-
տիպեալ խիստ չափաւոր ոճով մը
գրուած են, աւելի հասկնալի ընե-
լու համար՝ պէտք է որ Տ. Թորոս-
եանի և իրեններուն դէմ լարուած
դաւադրութեան վարագոյրին մէկ
անկիւնը գտնէ վեր առնենք, որպէս
զի ընթացող հանրութիւնն ալ իր
գատադրութիւնը հետզհետէ որոշ կրու-
ուանի մը վրայ հաստատէ, ուղիւ
գատաստան մը կարենալ ընելու
համար: Քանի որ Միթիւնիներ կազ-
մակերպելով և իրարու յաջորդող
ոճագործութեանց դէմ բողոքելով՝
կ'ապացուցանէ թէ՛ սակաւին հայու
ազնիւ արեւը չըլան կ'ընէ իրենցմէ
շատերուն երակներուն մէջ: Բնա-
կանաբար ոճերը միշտ ոճիր է, և
անձերու տարբերութիւնը օրէնքի
տուչե. պատժոյ թեթեւացում չունի:
Ոճերը՝ ըլլայ ատրճանակով կամ
մահակով, դանակով կամ կայնով,
ըլլայ թոյնով կամ տարբեր միջոց-
ներով, միևնոյն պայմաններու մէջ
կը դատուի: Կայ բարոյական և
զեւեռագործութիւնն ալ, որ վերին-
ներէն շատ աւելի ծանր կը կռու-
ւատ անգամ հասկցողներուն և խո-
րապէս գղացողներուն քով: Մենք
դառնանք մեր նիւթին:

Աւելի յարմարագոյն ժամանակ-
ներու վերապահելով վերոյիշեալ ե-
զեւեռակ խնդրոյն մանրամասնու-
թիւնները, որովհետեւ ծանօթներէ
սմանք բերանայի պատմուածքէ և
չատեր ալ նամակներու միջոցաւ
տեղեկացած են արդէն, իսկ բուն
հեղինակները ենթակայէն ինչ մը
աւելի միայն գիտեն, մենք փու-
թանք առ այժմ քանի մը բառե-
րու մէջ ամփոփել իրողութիւնները:

1905 թ 04 րոտտո ամիսէն սկըս-
եալ զգալի հաւածանք մը կ'սկսի
Տ. Ե. Թորոսեանի դէմ, որոնց մեծ
կարեւորութիւնն չ'տար իզլի խոյթ
մը ունեցած չ'լինելուն համար.
բայց մինչև այդ տարւոյն Գեղու
ամիսը կարգ մը աննպատ և վար-
կաբեկիչ տարածայնութիւններու հետ
մինչև քունառորովի կը յանդեսնեն
գործը, ուր այլ ևս զգուշութեան
պէտքը կ'զգացուի: Իր բարեկամ-
ներէն ոմանց կը պարզէ մութին մէջ
լարուած դաւերը, և մէկ քանիին
ալ կը դրէ. բայց այդ վատ արար-
քին սև հողի և խաւարի սրդի հե-

ղինակները մեծ փութանութեամբ
իրենց ամեն հանդիպածին, այդ թէ
կին, ծեր թէ տղայ, մանուկ թէ
երիտասարդ համոզել կը ջանան թէ
եղբէն «խեղդեցած է...»

Գործելակերպ մը՝ որ կը յիշեց-
նէ չորս հինգ տարի առաջ Բարիւղ
հրատարակուող «ժամանակ» Հան-
դէտին Տնօրէն խմբագիր Պ. Ս. Հա-
խումեանի: Եթէ չենք սխալիր՝ Վիկ
Տր ժողով ի յիմարանցը դրուելը
և հոն մեանելը, (ականջը խօսի Ա.
Ղուկասեանցին): Իսկ այս տեղ՝ վի-
ժած ոճագործութիւնը արդէն ու-
րիշ բանով մը ծածկել կարելի չը
պիտի ըլլար: Միւս կողմանէ ալ
այդչափ վրան բաց ոճագործու-
թիւն մը պարտիւրը անկարելիու-
թեան սահմաններուն մէջ մտած էր.
Տ. Թորոսեան ալ բան մը ընելու
կարող մէկն էր՝ եթէ ուղեր...:
Հետեւաբար վճռական քայլեր կառ-
նուէին այլ ևս...:

Մահու և կենաց պայքարը թա-
քուն ըլլալէ կը դադրի, նոր յար-
ձակումներ փորձանքու մէջ, նոր
յարձակումներ խանութներու մէջ.
(ականջը խօսի Պ. Եաւարչ Երչման-
եանի) դիտէ Պ. Օրնիկ Նորիկեան.
Նոր յարձակումներ սրճարաններու
մէջ. դիտէ Պ. Եփրեմ Պալպալեան.
Իրի յարձակումներ «Ազատ բեմի»
մէջ. լրբերի յարձակումներ «Ազատ
խոյր» ի մէջ. սաղերը կապիտոլի
դէմ պատերազմ կը մղէին... հէ՛,
Ե. Օսեան. այնպէս չէ՞: Նոր խոչ-
սանգումներ, նոր գրպարտիրաններ
նոր զարմանալիքներ, նոր պրո-
ստրուներ միսֆերա, որոնց մասին
այն ատենները իր բարեկամներէն
մէկ քանիին, և մասնաւորապէս Տր
Կ. Բաշայեան խանին գրած է Տիար
Թորոսեան:

Այս վատութեան տեսակէտով
զիտար գերազանցող դէպքերը մին-
չև 1906 Մարտ ամսոյ վերջերը կը
չարունակեն անարգել: Այդ ատեն-
ներն է որ կարեւոր վտանգի մը առջևը
առնելու համար Տ. Ե. Թորոսեան
Գեր. Ազատունի Առաջնորդին կը
գրի, իրողութիւնները ծանուցա-
նելու համար, որուն արդիւնքը գի-
տանք արդէն, և որուն կը հետեի
նախորդ նամակին մէջ համառօտիւ
յիշատակուած դէպքերը, իսկ ի լը-
րումն դժբախտութեան Տ. Եղիշէ
կ'ամբաստանուի ոստիկանութեան
առջև թէ՛ անձնասպան ըլլալ կողմէ...
և իբրև խեղագար Ապպասիի յի-
մարանցը կը զրկուի առ ի փորձ. և
այն տեղէն է որ «Թիթագանակին»
նամակները և շատ մը ուրիշներ կը
դրէ, որոնց արդիւնքին վրայ պիտի
խօսինք հետզհետէ: Իսկ «Մատու-
թեան» վերաբերեալները ուրիշ թը-
ւով:

ԽՄԲ.

Թ Ղ Թ Ա Պ Ա Ն Ա Կ

ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Դանիտ Ապպասիյէ 23 Փետր. 1907
Կառախարական Հիւանդանոց
Գեր. Տ. Միկայել Մ. Վ Ազատունի
Առաջնորդ Հայոց Երկրպետի և Նախա-

գահ Պատ. Քաղաքական Ժողովոյ Գաւ.
Վարչութեան

Ի Գահիրէ

Սրբազան Տէր.

Պատիւ ունիմ հաստատելու Ձ Հոկտ.
906 թուակիր նամակս, զոր ուղղեցի
Ձեզ՝ գտնուած Հիւանդանոցի Տնօրի-
նութեան հրամանաւ և միջոցաւ:

Կը ցաւիմ որ բարութիւնը չուղե-
ցիք ունենալ նպատաւոր ելք մը տալու
յիշեալ նամակաւ ըրած իմ համեստ
խնդրանքիս:

Մասնեցի այն ատեն ատոր պատ-
ճառը գիտնալ, և յիշեցի որ 906 Ապ-
րիլ 7 ին (երբ Ձեզի եկայ գանդաբու)՝
ա՛յնպիսի խօսքեր ըրիք, որոնք ինձի
մեծ վիշտ պատճառեցին, և որոնց կը-
ցեցիք նաեւ հետեւեալները.

«Մոռցա՞ք այն բոլոր վէճերը որ
Առաջնորդարանի քարտուղար Պ. Նազա-
րէթ Աղազարմեանի հետ ունեցաք երկար
ատենէ ի վեր. » հասկցայ ուրեմն թէ՛
ևս զո՞ւ մըն եմ օխերու և քինախնդ-
րութեանց...:

Տակաւին նոր ստացայ երթորս մի-
ջոցաւ Առաջնորդարանի Արարելէն Գի-
ւանէն ընդօրինակուած երկու ցուցա-
կազրութիւններ. որոնք իմ Գահիրէի
(Մէնչիյէ) տան մէջ գտնուած գոյգե-
րու՝ տեղական դատարանի մէկ վճռագ-
րով «ՀԱԿՁ» եղած մէկ մասը կը ներ-
կայացնեն:

Չեմ գիտեր թէ ատոնք ո՞վ կը զրկէ
չնձի. որովհետեւ եթէ Առաջնորդարա-
նէն կուզայ, պէտք է որ այդ ցու-
ցակները ուղղակի հիւանդանոցի Տնօ-
րինութեան ուղղուած նամակի մը ներ-
փակեալ զրկուէին ինձի արուելու
համար:

Կրնամ Ձեզի գիտցնել թէ՛ հաստա-
տութիւնը՝ ուր ես կը գտնուիմ, լաւ
կը կառավարուի, և զուք կրնայիք
վստահիլ անոր:

Այս երկու ցուցակները, զորս ըն-
դունեցայ, տան մէջ գտնուած գոյգե-
րուն ամբողջութիւնը չեն պարունա-
կէր: Նոյն իսկ հոն գրուած առարկա-
ներուն մէջ սխալներ կան: Ձօր օրի-
նակ. Տպարանական առարկու եւն կը-
չիտը, 600 է աւելի քիւլ է, ըստ ըս-
տացման ֆագրիւրներու: Միւնչիյէն այդ
ցուցակազրութիւններուն մէջ 40 օխա
նշանակուած է: Այս ահագին տարբե-
րութիւնը նախական մեծ վնաս կը
պատճառէ ինձ, իսկ այս տարբերու-
թիւնը առաջացած պէտք է ըլլայ կամ
զրկի սխալէ մը և կամ ԳՈՂՈՒԹԵԱՆ
մը հետեւանք է:

Չեմ կրնար հասկնալ թէ ի՞նչ
պատճառաւ իմ աշխատութեան սենեա-
կիս զոյքերը և գիրքերը, ինչպէս նաեւ
փոքրիկ Մատենադարանիս գիրքերը ո-
րոնք մօտ 200 ոսկի կ'արժեն նշանակ-
ուած չնն և զեռ անհիպ ձեռագիրները
որոնք ինձի շատ սուղի նստած են և
որոցմէ մէկը միայն յետ հրատարակու-
թեան 800 (*) ոսկիէն աւելի պիտի բե-
րէր, և մամոյ տակ էր արդէն եւն.
նոյնպէս նշանակուած չեն:

Դուք իսկ՝ Սրբազան Հայր. քաջ
գիտէք պատմութիւնը այդ ձեռագիրնե-
րուն, որովհետեւ բաժանորդագրուած
էք. ինչպէս ուրիշ 200) հոգիներ ալ:
(Միայն Եղիպոտի մէջ 500 օրինակը
պատուած էր. իւրաքանչիւրը 10 Փը-
րանգի բաժանորդագրութեամբ. Մ. Ե.)
Մանաւանդ թէ՛ ստեղծացայ որ
տունիս գոյքերէն մէկ մասը արդէն ծախ-
ուած է խիստ աժան գներով, առանց
ինձի ի պաշտօնէ տեղեկութիւն տրուե-
լու և առանց իմ կողմէ իմ հաւանու-
թեամբ մէկը ներկայ գտնուելու:

Ես քաջ գիտեմ օրինազրքին տրա-
մազրութիւնները և Առաջնորդարանի
պարտաւորութիւնները այսպիսի պտ-
րագայներու մէջ, որոնք կը վերաբերին
իմ անհատական իրաւանցս, պատուոյս,
անձնական գործերուս և գոյքերուս
եւն. և եւն. զմազղաբար հիմայ դիւրին

է հաստատել թէ՛ ինչ որ եղած և գոր-
ծադրուած է՝ հակառակ են օրինաց և
զրկանք իմ վերոյիշեալ իրուանցս ու
մանաւանդ զիտմամբ և ուղեղով գոր-
ծադրուած են:

Վարմունքը՝ որ ինձի դէմ ցոյց
կուտայ Առաջնորդարանը, յստակ կեր-
պով կապացուցանէ թէ՛ իմ ծանօթ հա-
կառակորդներս կը քաջալիկէ ինձի դէմ
գործելու...:

Վերագտնալով ցուցակազրու-
թեանց ընթացումին, գետցայ թէ՛ դա-
տարանը իմ իրաւանցս պահպանմանը
համար նիւղ նշանակած է Առաջնորդա-
րանը. կը յուսամ թէ՛ ՆԱ իր բոլոր ջան-
քերը չ'պիտի խնայէ իմ բողոք իրա-
ւունքներս աչ պաշտպանելու:

Ամէն պարագայի մէջ սակայն ի-
րաւունք ունիմ ըսելու թէ՛ արդարու-
թիւն չէ առանց պատճառի զիս հոս
փակուած պահել, և իմ բացակայու-
թեանս գործերս որպէս թէ՛ կարգադրել:
Կը խնդրեմ, Սրբազան Նախագահ,
որ ընդունիլ հաճիք իմ յարգանացս
զպացումներն և այլն:

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

(*) Մանօթ. Հանդուցեալ Երչման-
եան Ղեւոնդ Եպիսկոպոսի «խմ աստի
կեանքը» տիտղոսով հրատարակութիւնը
կահնարկուի որ 2000 օրինակ տպագր-
ուած է մինչև. 6 րդ պրակը 80) ոսկույ
պիւստէով մը, որուն 500 օրինակը (200)
ոսկույ փոխան Հայ. Բարեգ. Ընդ. Միւ-
թեան նուիրուած էր:

ԹԱՏՐԱՆ ՎԵՐՏԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՆ ԵՐԵՎԱՆԻ
ԵՐՍՏՅԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐՍԿԱՆ
Առաջին անգամ Դանիտի մեջ
1908 Մարտ 27, Ուղերագր գիրքեր,
ժամը 9 ին

Ի ՆՊԱՍ
Հ. Յ. ԴԱՆԵԱԿՅԱՆԻԹԵԱՆ

ՆՈՒԱԳ
Դաշնակի և Ջուրակի Առաջնորդները
Տեղի պիտի ունենայ,
Բարեկան Առաջնորդներ
Տիկին Հ. Պալեանի և Պ. Ս. Հոգոցի

ՀԱՄԵՐԳ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԵՂՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԵՐ
ԲԱՌԱՋԱՅԵ ԵՒ ՄԵՆԵՐԳ
Առաջնորդութեամբ Լ. ՊՈՂՈՍԵԱՆԻ
Երկուտ երգեցիկ խումբ բաղկացած
60 հոգիներէ

ԲՈՆԻ ԱՄՈՍՆՈՒԹԻՒՆ
խիստ ծիծաղաշարժ
կասկերգութիւն, մեկ արար
Հեղինակութիւն ՄՈՂԻԵՆԻ
Մանուսկրաւ Յայտագիրք և
երգեր ստանձին գրոյնով մը:
ԻՆԵՐ — Օրեակ Ա. կարգի 80
Օրեակ Բ. կարգի 60 զրուշ ողջ Ա.
կարգ քիկնարոն 20 — Բ. կարգի
քիկնարոն 15 — Արոն 10 — Վեր-
նասուն 3.

Տոմսակները կը ծախուին, Պա-
րոնայք ՊԵՐՊԵՐԵԱՆ Եղբարց խանու-
թը ի Պապ-ԷԼ-ԽՈՒԼԵ, Արաքական
Կառավարչատան (Մուհաբալի) ճիշտ
դիմաց, նաև Պ. ՉԱԲԵՀ ԲԻՐԵՃ-
ՃԵԱՆԻ մօտ, ի Խան-Խալիլ ձէվահիր
Վէջալէ, թիւ 3:

Ի ՆՊԱՍՏ ԹՈՒՐԻՈՅ ՍՈՎԵԱԼՆԵՐՈՒՆ

Վերջին ժամանակներս թիւրքական Հայաստանի ամեն կողմերում արեւում է սարսափելի կարօտութիւն, որ առաջ է եկել հունձքի պակասութիւնից, բնական աղէտներից, ինչպէս են երկրաշարժը, հրդեհը և այլն, և ընդհանրապէս երկրի անտեսական վերին աստիճանի աննպաստ պայմաններից:

Ամենայն Հայոց հանդուցեալ Կաթողիկոս Խրիստեան Հայրիկը, ի նկատի ունենալով Թուրքական Հայաստանի հայ ժողովրդի այդ ողբալի դրութիւնը, միջնորդութիւն էր յարուցել Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով Դաշիօվի մօտ, որպէսզի թոյլատրուի ընդհանուր հանդանուակութիւն բանալ ի նպաստ Թուրքական Հայաստանի մեր սովեալ և բազմակարօտ եղբայրների: Փոխարքայ կոմս Վորոնցով Դաշիօվ 1907 թ. հոկտ. 17 թուակիր և թիւ 22.311 իր գրութեամբ յայտնել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, որ ներքին և արտաքին գործերի մինիստրների հաւանութեամբ արտօնում է հանգանակութիւն այս նըպատակով և հաստատում է հանդուցեալ Կաթողիկոսի կողմից առաջարկուած Հանգանակիչ Մասնաժողովը, որ գտնվում է Թիֆլիսում (այս Մասնաժողովը ընտրուեց և հաստատուեց Կաթողիկոսական կոնգրակով այս տարուայ Մայիսին) և բաղկացած է հետևեալ անձերից -

Պ. Պ. Առաքելեան Համբարձում, Արարիսանեան Աւետիք, Արղւթեան Իշխանուհի Սօֆիա, Կափեան Գարբիէլ, Չաւէն Տիգրան, Մարտիրոսեան Գրիգոր Հայկանոյ, Մելիք-Աղաբեան Ալէքսանդր, Յարութիւնեան Սամսոն, Մարտիրոսեան Առաքել, Սահաբեան Բիւրիկ Կարապետ Վերիլեան Գրիգոր և Գալանթիար Ալէքսանդր:

Հանգանակիչ Մասնաժողովը ընտրել է իր ղեկանը, այն է - Ալէքսանդր Մելիք Աղաբեան՝ նախագահ, Սամսոն Մարտիրոսեան՝ փոխ նախագահ, Առաքել Մարտիրոսեան՝ գանձապահ և Համբարձում Առաքելեան՝ քարտուղար:

Հանգանակիչ Մասնաժողովը այժմ, սկսելով իր գործունէութիւնը, զիմում է հայ հասարակութեան բոլոր խաւերին և կոչ է անում չը զլանալ իր նպաստները Թուրքական Հայաստանի բազմակերպ ազէտներից տառապող և կարօտութեան վերջին ծայրը հասած հայ ժողովրդին:

Մասնաժողովի բոլոր անդամներն ընդունում են իրանց մօտ նախարարութիւններ: Օտար քաղաքներից նուէրներ կարելի է ուղարկել Մասնաժողովի գանձապահի անունով, որի հասցէն է՝

Tiflis, Sociéte Mantacheff & C-ie, A. Saroukhan.

Ստացում նախարարութիւնների և Թուրքական Հայաստան ուղարկուած գրամական նպաստների մասին պարբերաբար հաշիւ կը ներկայացուի հասարակութեան ընդհանուրութեան միջոցով:

ԽեղճՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ ԱՐՍԻԿԻՐՅՈՒՆԵՐՈՒՆ

Գիտէինք, սիրելի հայրենակիցներ, թէ մեր խեղճ Հայաստան աշխարհը հուրի, սուրի և ամեն անսակ արհաւիրքներու դժոխք մը դարձած էր: Մեռնողներուն հրանդուներ, որբերուն աղեկտուր ճիւղը, տառապողներուն վայնասունը լսելով կարեկցած, լացած էինք մեր արտին խորէն. գործնականապէս պատասխանելինք ալ անոնց՝ ընելով ինչ որ մենք կրնայինք ընել. բայց հեռուէն եկած ձայներէ շատ անգամ անչոր կը մնան, որչափ ալ ուժգին և պաղատողին ըլլան անոնք:

Այսօր, սակայն, շատ մօտէն է որ մեր ականջին կը հասնի այդ ձայնին ուժգնութիւնը: Այսօր է որ խորապէս կզգանք ազէտին մեծութիւնը:

Արաբկիրէն վերջերս հասած լուրերը շատ տխուր կը նկարագրեն անդրի վիճակը:

Խեղճութիւնը իր գագաթնակէտին հասած է:

Սղութիւնը և՛ անոր անիծեալ քոյրը՝ թշուառութիւնը, հոն է, եկած հասած մեր սիրելիներուն ոտքը:

Մարդիկներ օրերով անօթի կը մնան կոր եղբր, մարդիկներ անօթութիւնէ մեռած են եղբր...

Վախ, մեր սիրելիներն են անոնք, մեր եղբայրներն ու քոյրերը, որ մեռած են և կամ պիտի մեռնին:

Կարելի բան է այս...

Եւ սակայն՝ իրականութիւնը, ժանտ ու դժոխքներ, մեր առջին է. ու ձեռքի է, ո՛վ իմ մեռնող սիրելի եղբայրներս, որ կը նուրբմ սոյն տաք արցունքը որով կատուշնաչարեմ այս սև աղիւրը:

Բայց ի՞նչ օգուտ լալ, երբ արցունքը անչոր է կասեցնելու մահացու հարուածը:

Պատի թողունք ուրեմն, ո՛վ ընթերցող Արաբկիրցիներ, որ մեր քոյրերը անօթութիւնէ՞ մեռնին:

Ի՞նչ առող և անօթական պարտականութիւն մը մեր վրայ, այս մահու և կենաց սարսաղազեցիկ պահուն:

Չեր եղբայրսիրութեան զգացումներուն է որ այս տողերով դիմում կրնեմ, վստահ ըլլալով որ դուք ամենքդ պիտի ընէք ինչ որ կրնաք:

Հանգանակութիւն մը բացուած է ի նպաստ Արաբկիրի սովեալներուն, և տարակոյս չունիմ որ բոլոր Գահիրէի և չրակայներու Ա-

րաբկիրցիները պիտի ուզեն մասնակցիլ՝ իրենց նպատակները հասցընելով մեր հասցէին, մինչև որ այս նպատակաւ մասնաբաժն մը կազմուի:

Շէ՛ն ու պոյճառ մնաք:
Նախարարութիւնները պիտի հրատարակուին տեղական Մամուլով:

Ս. ՕՏԱՊՈՇԵՆՆ

Վերջին պահուն - Այդ Յանձնախումբը կազմելու առաջադրութեամբ արաբկիրցի ազգայինները կը հրաւիրուին ներկայ ըլլալ համախումբումի մը, որ տեղի պիտի ունենայ այս երեքշաբթի օր Լսարան ընթերցատան մէջ, երեկոյեան ժամը 8 ին:

Մեր սովեալ եղբայրներուն առնուով պարտք կը գնենք մեր մէն մի հայրենակցի վրայ, որ անպատճառ ներկայ ըլլայ այս դեմարտումին:

Չքմեղանք մը աններելի պիտի մնայ Փութաղէք, հայրենակիցներ, մահ կանացու իրիկէնքը դատուալ մեր մեռնող եղբայրներուն:

ՆՈՅՆ

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԻՆԱՆՆԱՆԻ ՍՄԵՂԱԳՈՐԾ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ
ՍԵՏԱՐԱՌՎ ԲԱՆՈՒՄՈ
400 թիւ լապիսցած
ԹԻՒՐ 5 ԴՐՇ. ՈՂՁ

Մեծ սրճարան Հայկականի մէջ ի յոյց դրուած սոյն անունան մետաքեայ ձեռագործի վիճակահանութիւնը՝ որուն անցեալ Փետրուար ամսայ մէջ անգի ունենալը ճանաչուած էր, բայց ինչ ինչ պատճառներով յետագայում է. անոնք որ սոյն չբեալ զարգը ունենալ կը ցանկան, ժամ առաջ թող դիմեն «Արշալոյս» ի տպարանը Տ. Գեորգ-Փափաղեանի մնացեալ սովեալութեամբներէն ղեկու համար, որով անօթեալս յետոյ տեղի պիտի ունենայ վիճակահանութիւնը Հայկական սրճարանի մէջ կանխաւ ծանուցուելով:

ՆԱԽԱԿԵՐ ԳՐՈՇԱԿԷՆ ՏԻՍՐՊԵՐԻԷՆ ԵՒ ՄՈՒՇԷՆ

«Գրօշակի» ի Փետրուարի համարին մէջ Տիարպէքիի և Մուշի կայսրութիւնը պարզող հետեւեալ գրութիւնները կը կարդանք:

— Տիարպէքի 22 Յունուար. Բաղաքին մէջ սրտածմիկ անտարան մը կը պարզուի: Պիթիլիսէն, Մուշէն և Ստամբուլէն 5000 է աւելի գաղթականներ եկած են հոս, ծայրաստիճան աղքատ և թշուառ, որոնք մահուան ճիրաններէն ազատելու համար պերճարկային և ողի ի բոլին ջանքեր են հարկաւոր: Եթէ չուտով օգնութիւն չը հասնի մահը անվրէպ ջարդ ու փշուր պիտի ընէ այդ թշուառները:

Տեղի ժողովուրդը զգած է առաջնորդ Եղիկիէլ վարդապետէն որ, ընդունակ ամէն ստորութեան և գաւառահանութեան, իրական շարիք մը եղած է ժողովրդի զլխին: Արդէն հաստատուութիւն կը չըջին որ շատ մը հայեր կը պատրաստուին կաթողիկոսեան զինել այդ անարժան եկեղեցականի ձեռքէն

ազատելու համար: Եթէ մարտը եւ արժանաւոր եկեղեցական փութով չուղարկուի, շատ հաւանական է որ ժողովրդին համբերութիւնը հասնի և կրթայ կաթողիկոսեան զինիչը նեաւի:

— Մուշ 10 Յունուար. — Տարօնի ժողովուրդը պարաքի տակ խեղճում կը գողթէ Վան, Կարին, Տիարպէքի, Բաղէշ, թողնելով իր շէնաւոր օժախը: Օսմանեան ղեկիմի սպաննիչ շղթայի ամենանեղ օղակը Տարօնի վրին է ոլորած, կառավարութիւնը անօթէն է և հարստահարիչ, տեղին ժողովուրդը վայրագ և կատաղի:

Այստեղ ժողովուրդը, բայց, վասակաւոր, աշխատող հայն է միայն, իսկ քիւրդերը, աղքատն ալ հարուստն ալ աղա են, բէկ են, անոնք են վայրղները, աէրերը, իսկ թուրքերը պաշտօնեաներ, կառավարիչներ և բոլորն ալ խոնէտան են:

Մուշի զաշարի մէջ ալ ու սարսափը կը թագաւորէ:

Ղաւթի բէկ՝ որուն ընդհարումը պատճառ էինք թուրք զօրքերու հետ, մեր ընկերներու գէմ հետեւի ու անոնք ինչի գաւառահանութիւն մը գործեց որը անպատիվ չմնար անչուչտ: Այդ նամէքտ բէկին գաւառահանութիւնով նահատակուած են մեր երեք կարիճ ընկերները Շամի փրօփականիստ ճահիլ Չաւէնը, խրքապետ Սայոս, սուրհանդակ Չարօն, կառավարութիւնը անոնց զինիչները լուսանկարիչէ յետոյ հրամաններ է թողել Գուրգէնի և Գեորգ Չաւէնի գերեզմաններուն մօտիկ:

Ղաւթի բէկը յայտնի Մուսա բէկի եղբայրն է և Տարօնի ամենարարարոս և կեղեքիչ ցեղերէն: Սա Գեորգ Չաւէնի զինակիցն է եղած, վերջերս կառավարութեան գէմ դուրս եկաւ և իր զիւղը ուրակործեց, իսկ ինքը 50-60 հողիէ խմրի մը զլուխ անցած կը չըջեր շրջակայ քրդաբնակ զիւղերը և կը կազմակերպէր կառավարութեան գէմ:

Այս երկու երեւէն մարդը, որու քաղութեան ինչպէս կերեւի, անմիջապէս սահմանակից է ներդատութիւնը՝ ժամանակին ուղի էր Գեորգին ալ գաւառահանը, բայց սա շուտ կուտնէ էր և երեսին տալով բէկին իր նենգատութիւնը, սպառնացեր էր: Ասոր վրայ ի նշան հաւատարմութեան քիւրդ բէկը իր կողմը բաժնոր կը ընծայէ Գեորգին, ուրիշ յետոյ, ըստ ընկերների, շատ ետանդուն և անհուէր աշխատանք է գոյց տւած, այնպէս որ քիւրդ զիւղացիութեան մէջ բաւական ոգեւորութիւն առաջ բերած էր:

Հայ հերոսներու մահը ընդհանուր դաւ է պատճառել նոյն իսկ թուրք և քիւրդ զինուորականութեան մէջ, իսկ Ղաւթի գաւառահանութիւնը ընդհանուր զլուրք և ամօթ իր աղամարդութեան:

ԺԱՄԱՆԱԿԱԿՅ ՊԵՏԱՊՈՐՏԻՆ Գ. ՀԱՏՈՐ ՇԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Հ. ՆՈՐԻԹԵԱՆ ՎԵՆԵՏԻԿ

620 մեծ երեսներէ բաղկացեալ այս պատուական հատորը, սրուն մէջ վեր, ծերունի հեղինակը ջանացած է ամբողջ Ռուս-թուրք և Թուրք-թերմանական պատերազմի չանկան անցքերը, մասնաւորապէս կը յանձնարարուի անոնց որ պատմութիւնով կը շահ սպրդուին, ինչպէս և անոնց որ օտար լեզուներ զիանալու ստուերութիւնը չունին:

Այս հատորին զինն է՝ Գահիրէի համար 22 զիւլի, իսկ Ա. Բ. և Գ. հատորները միասին 50 զիւլի:
Միւթթուրքի ԳՈՐԾ. ԳՈՒՇԻՐԷՆ
B. P. 244